

ՀՈՒՄԿ ԲԱՆՔ

Մեկգոնեան Կրթական Հաստատություն, 1998

Միքելի սաներ,

Այսօր, այս պատմական յարկին տակ, խառն զգացումներով դուք կը բոլորեք անմոռանալի շրջան մը որ չ'աւարտիր, այլ՝ կը կերպարանափոխուի նոր սկզբնաւորութեան մը: Որպէս Մեկգոնեան Կրթական Հաստատութեան 72-րդ տարուան հունձքը, ձեզի նախորդողներուն նման, ձեր հիմնական առաքելութիւններէն մէկը պիտի ըլլայ վերածուիլ նոր սերմերու որպէսզի Սփիւռքը չվերածուի խոպան դաշտի: Եկէ՛ք միասին խորհրդածենք այդ պատասխանատուութեան մասին:

Մարդ կը ծնի ակամայ, ապա՝ ժամանակի ընթացքին կ'ըլլայ պատասխանատու իր մտածումներուն, խօսքերուն, ընտրանքին, որոշումներուն եւ արարքներուն - իր անձին, ընտանիքին, հաւաքականութեան, հայրենիքին եւ բնութեան հանդէպ:

Պատասխանատուութիւնները կը բազմանան, կը ճիւղաւորուին ու կը կրեն որակական եւ քանակական զարգացումներ, կեանքի զանազան հանգրուաններուն, արտաքին եւ ներքին ազդակներու հետեւանքով:

Տարիներ առաջ, առաւօտ մը կանուխ, մանկապարտէզի դասարանի մը մէջ, առաջին անգամ ըլլալով մայրական գուրգուրանքին կողքին, նոր դէմքեր կը մխիթարէին ձեր բաժանումի կսկիծը, եւ երկար տարիներ կը ստանձնէին ձեր դաստիարակութեան երախտաւոր աշխատանքը: Ձեր պատասխանատուութիւնը կը մնար սահմանափակ, առօրեայ դպրոցական պարտականութիւններու ծիրին մէջ, ծնողներու եւ դաստիարակներու հոգածութեամբ հովանաւորուած:

Կարճ արձակուրդէ մը ետք, ձեզմէ շատեր պիտի շարունակեն իրենց բարձրագոյն ուսումը. ուրիշներ հաւանաբար գործնական կեանքի իրենց առաջին քայլերը պիտի առնեն : Երկու պարագաներուն, ժամանակի ընթացքին, ձեր պատասխանատուութեան ոլորտը պիտի ընդլայնի ընդգրկելու համար բազմատեսակ ծրագիրներ, մտահոգութիւններ, հրճուանքներ, դժուարութիւններ, պարտաւորութիւններ - անձնական, ընտանական, ընկերային եւ տնտեսական մարզերուն մէջ: Ինչպէ՞ս կարելի է յաջողութեամբ դիմագրաւել այդ հաւանականութիւններուն ստեղծած տագնապները: Ինչպէ՞ս կարելի է զատորոշել շիտակ ուրոշումը սխալէն, բարին չարէն, եականը մակերեսայինէն, անհրաժեշտը անկարելուէն:

Պատասխանատութեամբ:

Բայց ինչպե՞ս կարելի է սահմանել պատասխանատուությունը, որպես զգացում, որպես մտայնություն, որպես վարուելակերպ, որպես կեանքի ուղի: Պատասխանատու նկարագիրը կը կազմաւորուի ժամանակի ընթացքին, բնականօրէն կամ տազնապներու ճնշումին տակ, առօրեայ զգացական, մտային եւ գործնական կապակցութիւններով, սովորութիւններով ու կը վերածուի երկրորդ բնութեան: Պատասխանատու անձը կը վարուի այնպէս ինչպէս որ պէտք է վարուի, անկախ արտաքին ազդեցութիւններէ եւ այն իրողութենէն թէ ոեւէ մէկուն կողմէ կը դիտուի, կը դատուի կամ ոչ, նոյնիսկ եթէ փորձութիւնը ունենայ՝ այլ կերպ վարուելու:

Այն անձը որ ինքզինք կը յարգէ, կը հաշտեցնէ իր հոգեկան եւ նիւթական պահանջները: Կ'ունենայ հաւասարակշռուած կեանք, հեռու չափազանցութիւններէ: Կը հոգայ իր անձնական առողջութեան եւ ապահովութեան: Կ'ըլլայ լուրջ, զգաստ ու հեռատես: Չ'արտօներ որ ուրիշներ ձեռնավարեն զինք կամ՝ շահագործեն: Կը վարուի ուրիշին հետ այնպէս ինչպէս պիտի ուզէր որ ուրիշը վարուէր իր հետ՝ յարգանքով. փոխադարձ յարգանքը բարձրացնելով սկզբունքի մակարդակին:

Յարգանքի նուազագոյն արտայայտութիւնը քաղաքավարութիւնն ու կենցաղային զուսպ վերաբերմունքն է: Յարգանքը կ'ենթադրէ հասկնալ ուրիշին զգացումներն ու մտածումը, արժեւորել ու գնահատել անոր արժանիքները, ըլլալ լայնամիտ, նոյնիսկ եթէ չենք բաժնէր անոր հաւատալիքներն ու մտածողութեան եղանակը, մինչեւ այն առեւն որ անոնք վնասակար չեն: Արդարօրէն վարուիլ անոր հետ, անկախ իր ցեղային, կրօնական, սեռային, գաղափարախօսական եւ այլ պատկանելիութիւններէն: Չըլլալ եսակեդրոն, անձնական պէտքերուն ու տենչերուն գոհացումով բաւարարուելով: Չըլլալ անձնասէր, անարգ, դաժան եւ անզգամ ուրիշին տազնապներուն եւ ցաւին առջեւ: Կարեկցիլ ուրիշին, մտահոգուիլ անոր բարօրութեամբ, ու երբեմն մորմոքիլ անոր ցաւով ու կարելիութիւններու սահմանին մեջ բարեկամական աջակցութիւն ցոյց տալ:

Պատասխանատու անձը պէտք է ըլլայ պարկեշտ: Պարկեշտութիւնը կ'ընթադրէ ըլլալ անկեղծ, ըսել ամբողջական ճշմարտութիւնը, չխաբել, չզեղծանել, չմոլորեցնել, յարգել տրուած խոստումն ու յանձնառութիւնը, վճարել պարտքը: Առնել որոշումներ, հիմնուելով առարկայական ապացոյցներու վրայ ու ոչ թէ՛ նախապաշարումներու: Յաճախ, իրազէկ ըլլալէ ետք գործուած սխալին, ընդունիլ զայն բարձրաձայն, ինքնաքննադատութեամբ, եւ փորձել ապագային չկրկնել նոյնանման սխալներ:

Պայքարիլ մարդկային բարոյական հիմնական արժէքներուն հակառակ եղող արարքներուն: Դասաւորել արժէքները իրենց կարեւորութեան շարքով: Քաջութիւնը ունենալ դիրքորոշուելու եւ գործադրելու ինչ որ արդար է, նոյնիսկ եթէ այդ կ'ենթադրէ յուսախաբութիւն եւ զոհողութիւն: Քաջութիւնը չի նշանակեր ըլլալ անզգոյշ կամ վատ, այլ՝ կատարել տուեալ պարտականութիւնը հաւատքով, բարոյական կորովով ու մտաւորական պարկեշտութեամբ: Խորհիլ գործելէ առաջ, կշռ ադատել անոր անմիջական եւ հեռակայ արդիւնքները, ըլլալ պատասխանատու առնուած որոշումին հետեւանքներուն, չայպանել ուրիշը մեր գործած սխալին համար, չնուստացնել ուրիշին

իրագործումները: Նպատակադրել հասնելու գերազանցին, վսեմագոյնին – աշխատասիրութեամբ, հետեւողականութեամբ, կարգապահութեամբ եւ ինքնակազմակերպութեամբ: Քաջութիւնը կ'ենթադրէ նաեւ ինքնազսպումի կարողութիւնը որուն միջոցաւ կարելի է կ'ըլլայ կասեցնել անյարմար վարուելակերպ ունենալու մղումը: Կ'ենթադրէ զսպել մեր բարկութիւնն ու կիրքը եւ ըլլալ համբերատար:

Հաւաքականութիւնները եւ ազգերը կը յաղթահարեն դժուարութիւններ եւ կը բարելաւեն իրենց կեանքին որակը երբ անհատները կը յարգեն օրէնքը, գիտակից կ'ըլլան իրենց իրաւունքներուն իրաւասութիւններուն, պարտաւորութիւններուն եւ պարտականութիւններուն եւ կամաւոր մասնակցութիւն կը բերեն հաւաքական հանրօգուտ աշխատանքներուն:

Որպէս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան սաներ, շարունակելով ձեր նախորդներուն ասանդութիւնները, ձեր անհատական եւ քաղաքացիական պատասխանատուութիւններուն կողքին ունիք սրբազան պարտականութիւնը, Մփիւոքի դժուարին պայմաններուն մէջ, վառ պահելու ձեզի փոխանցուած ազգային ոգիի ջահը, գիտակից հաւատքով զայն յանձնելու, որպէս ասանդ, յաջորդ սերունդներուն:

Գար մը առաջ, աշխարհացրի ալ ժողովուրդ մը, իր ասանդութիւնները վերածեց ազգային գաղափարախօսութեան եւ իր տկարութիւնները աճող հզօրութեան: Մենք, նոր հազարամեակի մը սեմին, ընդունինք պատասխանատուութիւնը Մփիւոքի Հայութեան հոգեվարքը վերածելու վերածնունդի որպէսզի Հայ ըլլալու հանգամանքը ունենայ գործնական առաւելութիւններ: Ամենօրեայ տեղեկութիւնները զտենք, բիրեղացնենք, կշռադատենք եւ վերածենք զանոնք գիտելիքի: Գիտելիքները քննարկենք, վերլուծենք, համադրենք եւ խտացնենք իմաստութեան: Ունենանք յստակ նպատակներ նոյնիսկ եթէ անոնք թուին ըլլալ անհասանելի: Երեսակայութեան թրիչքը թող ըլլայ սահմանը մեր կարելիութիւններուն: Հաւատքը ըլլայ մէկ քայլ առաջ մեր տրամաբանական մտածողութենէն: փնտռենք նոր ուղիներ: Մեր ձախողութիւններուն պատճառները իմանալէ ետք փորձարկենք ալ միջոցներ: Մեր փոխ-յարաբերութիւններուն ընթացքին, վարժուինք միաժամանակ առնելու եւ տալու գաղափարին: Համագործակցութիւնը թող հիմնովի յստակ սկզբունքներու վրայ: Գիտակից ըլլանք մեր իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն ու կարգապահ՝ անոնց գործադրութեան ընթացքին:

Ըլլանք պատասխանատու մեր պատմութեան առջեւ, բերելով մեր համեստ նպաստը որպէս պատասխանատու նկարագիր ունեցող Հայ անհատներ եւ հաւատաւոր հաւաքականութեան ապրող մասնիկներ:

Միբելի սաներ,

Բարի ճանապարհ կը մաղթեմ ձեզի: Ձեր կեանքը ըլլայ բեղուն ու երջանիկ: Բարի յիշատակները վերածեցէք գործնական կապերու: Մի մոռնաք ձեր ընկերները, ձեր դաստիարակները, ձեր դպրոցը, ձեր Միութիւնը եւ անոր հիմնական սկզբունքը.

Միութիւնը զօրութիւն է:

Ճարտարապետ Մկրտիչ Լ. Պուլտուբեան
Յունիս 13, 1998

[HOME](#)